

**ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Վարդան ԲՈՍԱՆՁՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Բանալի բառեր: հարկային քաղաքականություն, հարկային համակարգ,
հարկային վարչարարություն, հարկատեսակներ, ստվերային տնտեսություն

Շուկայական հարաբերությունների ձևավորման պայմաններում Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումներն առաջադրեցին գործնական և տեսական բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծմանն ուղղված մոտեցումներն ու մշակումներն, առաջին հերթին, հետապնդում էին երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների համակարգվածության և արդյունավետության ապահովման նպատակ: Բարեփոխումների կարևորագույն խնդիրներից մեկը, թերևս, պետք է համարել կենտրոնացված ֆինանսական ռեսուրսների հավաքագրման հարցը, քանի որ պետական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ միջոցների ստեղծման հիմնական աղբյուր են հանդիսանում հարկային մուտքերը:

Քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների անցած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում իրականացվեցին լայնամասշտաբ միջոցառումներ՝ ուղղված ժողովրդավարական համակարգի ստեղծմանը և շուկայական տնտեսության հիմքերի կայացմանը: Իրականացված բարեփոխումների կարևոր ուղղություններից էին սեփականության մասնավորեցումն ու ապապետականացումը, այդ հենքի վրա, գնագոյացման շուկայական մեխանիզմի ներդրումը և տնտեսական գործունեության ազատականացումը: Նպատակը տնտեսական համակարգի գործունեության և երկրի զարգացման առավել բարենպաստ միջավայրի ստեղծումն էր: Դրան հասնելու, ինչպես նաև անհրաժեշտ հարկային մուտքեր ապահովելու համար, անշուշտ, պահանջվում էր նաև շուկայական կառուցակարգերի շարունակական կատարելագործում և արդյունավետ հարկային համակարգի ստեղծում, որոնք պետք է նպաստեն ինչպես պետության և հասարակության ֆինանսական պահանջմունքների բավարարմանն, այնպես էլ գործարար միջավայրի բարելավմանը: Այդ իսկ պատճառով, Հայաստանում իրականացված բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկը դարձավ հարկային հարաբերությունների զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացումն, ինչը մեծապես նպաստեց տնտեսական ազատական հա-

րաբերությունների կարգավորման սկզբունքներին համապատասխան հարկային համակարգի ստեղծմանն ուղղորդված հարկային քաղաքականության իրականացմանը:

Հարկ է նշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները ցույց տվեցին, որ գլոբալացման պայմաններում տնտեսական հարաբերությունների կարգավորման, հանրապետության տնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման և, որ ամենակարևորն է, պետական գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացման համար ձևավորված կառուցակարգերն ու հարկային լծակները դեռևս չեն բավարարում շուկայական տնտեսության ժամանակակից պահանջներին: Մասնավորապես, պետական ֆինանսական համակարգի ցածր արդյունավետությունը, ստվերային տնտեսության զգալի ծավալները, հարկեր/ՅՆԱ հարաբերակցության գոյություն ունեցող մակարդակը, հարկային բեռի անհամաչափ բաշխումը, հարկային հարաբերությունների կարգավորման օրենսդրական կառուցակարգերի անկատարությունը և տնտեսական զարգացման ժամանակակից միտումները պահանջում են նորովի իմաստավորել դեռևս կենսունակ ու առաջացած նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ է հարկային համակարգի համալիր վերափոխումների իրականացում և արդիականացում:

Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հարկային վարչարարության կատարելագործման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք խնդիրների լուծմամբ, ինչն, անշուշտ, էականորեն կնպաստի տնտեսության զարգացմանը և երկրում ֆինանսական կայունության հաստատմանը: Մինչ օրս հանրապետությունում իրականացված հարկային քաղաքականությամբ գերազանցապես հետապնդվել է ֆիսկալ նպատակ, իսկ հարկերի կարգավորիչ գործառույթը մղվել է հետին պլան: Այդ առումով, հարկային համակարգի զարգացումը, նախ և առաջ, պետք է ենթադրի տնտեսական գործունեության խթանմանն ուղղված և համակողմանիորեն հիմնավորված հարկային դրույքաչափերի սահմանում, հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված կառուցակարգերի ներդրում, հարկատու-հարկային մարմիններ փոխհարաբերությունների իրավական կարգավորվածության մակարդակի բարձրացում, հարկային օրենսդրության կայունության և համալիրության ապահովում, հարկերի վճարումից խուսափելու համար գործուն պատժամիջոցների կիրառում:

Նշված նպատակների իրագործման համար հարկային համակարգի հիմնական խնդիրը պետք է լինի ոչ միայն պետական գործառույթների իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների հավաքագրումն, այլ

նաև տնտեսական գործընթացների վրա ցանկալի ներգործության և պետական կառավարման արդյունավետության ապահովումը: Այդ նպատակների իրագործումը ենթադրում է նշված հիմնահարցերի, ինչպես նաև տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրություն, ՀՀ-ում դրանց կիրառման առանձնահատկությունների վերլուծություն, հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրների բացահայտում, հարկային ներուժի գնահատում, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացում և գործարար միջավայրի բարելավում:

Այսպիսի խնդիրների լուծումն իր հերթին պահանջում է գնահատել տնտեսության հարկային ներուժը և մշակել երկրում իրականացվող հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հարկային վարչարարության կատարելագործման ուղիներ.

- ուսումնասիրել տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման տեսական և մեթոդական հիմքերը,
- գնահատել հարկային համակարգի դերը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում,
- ուսումնասիրել հարկային հարաբերությունների կարգավորման միջազգային փորձը և հարկային համակարգերի գործունեության իրավական ապահովվածության խնդիրները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության տնտեսության և դրանում հարկային լծակների ձևավորման առանձնահատկությունները,
- բացահայտել հարկային հարաբերությունների կարգավորման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները,
- գնահատել ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության արդյունավետության մակարդակը և մշակել դրա բարելավմանն ուղղված առաջարկությունների ու կառուցակարգերի փաթեթ,
- գնահատել ՀՀ ստվերային տնտեսության չափերը և հարկային վարչարարության ազդեցությունը գործարարության վրա,
- առաջարկել ՀՀ-ում գործարար միջավայրի բարելավմանն և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրեր,
- մշակել հարկեր/ՅՆԱ հարաբերակցության մակարդակի և դրա վրա ազդող գործոնների գնահատման տնտեսաչափական մոդել, հարկային ներուժի համալիր գնահատման մոտեցումներ և հարկային բեռի արդարացի բաշխման կառուցակարգեր,
- վերլուծել արտաքին տնտեսական համագործակցության առանձնահատկությունները և նախանշել արդի պայմաններում Հայաստանի համար դրա իրականացման արդյունավետ ուղղություններ,

մշակել հանրապետությունում վարվող հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հարկային վարչարարության կատարելագործման ուղիներ:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրում տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում կարևոր դեր ունի հարկային քաղաքականությունը, որը հանդիսանում է սոցիալական խնդիրների և պետական գործառույթների իրականացման հիմնական միջոց: Տնտեսության պետական կարգավորման կարևորագույն գործիքներից մեկը հարկաբյուջետային համակարգն է, որն երկրի տնտեսական զարգացման գործում ունի առանցքային դեր: Այս հանգամանքը պահանջում է հարկային քաղաքականության շարունակական կատարելագործում՝ հետապնդելով բյուջետային մուտքերի ավելացման, մրցակցային միջավայրի բարելավման, ներդրումային գրավչության ապահովման, տնտեսության իրական հատվածի զարգացման և ստվերային տնտեսության կրճատման նպատակներ:

Ազատական տնտեսական հարաբերությունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ տնտեսության պետական կարգավորման նպատակներն, ընդհանուր առմամբ, հետևյալներն են.

շուկայական հարաբերություններով պայմանավորված բացասական ազդեցությունների մեղմում,

ազատական պայմաններում տնտեսական հարաբերությունների կարգավորման օրենսդրաիրավական հիմքերի ձևավորում,

տնտեսական գործունեության համար արտադրական և ֆինանսական բարենպաստ պայմանների ստեղծում,

հասարակության խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության ապահովում:

Նշված հիմնախնդիրների լուծմամբ հանդերձ, յուրաքանչյուր պետության կառավարման համակարգի գործունեությունն ուղղված է կայուն տնտեսական աճի, առավելագույն զբաղվածության, ներդրումների ու խնայողությունների, արտահանման և ներմուծման, բնակչության եկամուտների ու ծախսերի միջև հավասարակշռության ապահովմանը: Այդ խնդիրների լուծման արդյունավետ գործիք են հանդիսանում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները, որոնց իրականացման նպատակամետությունն ու արդյունավետությունը մեծապես կախված են տնտեսության կարգավորման հարկային լծակներից և դրանց կիրառման կառուցակարգերի ամբողջությունը կազմող հարկային համակարգից: Հարկային համակարգը, լինելով հարկային հարաբերությունների կարգավորման գործընթացի ամբողջականությունն ու միասնականությունն ապահովող միջոց, իրականացնում է հարկերի սահմանման, հար-

կային պարտավորությունների կատարման, հարկային հսկողության կազմակերպման, հարկային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման և այդ համակարգին առնչվող այլ խնդիրների լուծման, հետևաբար, նաև տնտեսության պետական կարգավորման կարևորագույն գործառույթներ: Առանց հարկային համակարգի անհնարին կլինի սոցիալ-տնտեսական մի շարք հիմնարար ծրագրերի իրագործումը, քանի որ հենց այս համակարգի միջոցով է պետությունը կարողանում մասնակցել հանրային կառավարմանը և շուկայական հարաբերությունների կարգավորմանը: Հարկային համակարգի միջոցով են ապահովում պետական գործառույթների համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը, սոցիալական ծրագրերի իրականացումը և տնտեսության ճյուղերի զարգացումը: Ինչպես յուրաքանչյուր, այնպես էլ հարկային համակարգի գոյության և գործունեության առանցքային չափանիշը դրա տարրերի միջև փոխկապակցվածության և ամբողջականության ապահովման, համակարգի առջև դրված խնդիրների լուծման ունակությունն է:

Հարկաբյուջետային քաղաքականությամբ կարելի է ազդել ինչպես եկամուտների վերաբաշխման գործընթացի, այնպես էլ եկամուտների մակարդակի բարձրացման վրա: Տնտեսությունում եկամուտների ձևավորման վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար կարևոր նշանակություն ունի հարկաբյուջետային բազմարկիչի մեծությունը, որի նշանակությունը համակողմանիորեն գնահատվել է Ջ.Քեյնսի կողմից: Ըստ այդ գնահատականի հիմնավորվում է պետության միջամտության անհրաժեշտությունը տնտեսությունն անկումից հանելու, ցնցումները մեղմելու կամ կասեցնելու և տնտեսական աճի կայուն տեմպեր ապահովելու համար: Ընդ որում, նրա կողմից պետության դերը, հատկապես կարևորվում էր որպես ամբողջական պահանջարկի վրա ազդող եական գործոն¹:

Տնտեսության կարգավորման գործում, անշուշտ, մեծ է հարկային լծակների դերը, որոնց գործադրման առանձնահատկությունները հաշվի առնելու և հիմնական ուղղությունները որոշելու գործառույթը իրականացվում է հարկային համակարգի կողմից: Այն իրենից ներկայացնում է որոշակի բաղադրիչների օրգանական ամբողջություն, որոնց միջև կապերի ամրությունն ու ճկունությունը մեծապես կանխորոշում են համակարգի զարգացման ռազմա-վարությունը և դրա կենսագործման ուղղու-

¹John Meynard Keynes “Jeneral Theory of Employment, Interest and Money”. London, Macimillan 1936.

թյուններն, ինչպես նաև հարկային համակարգի հիմնական նպատակի՝ պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականության իրագործման արդյունավետ ուղիներ:

Հարկային համակարգերը ներառում են տնտեսության կարգավորման համապատասխան գործիքներ, որոնց գործադրման համար դրանք կազմված են լինում հետևյալ ենթահամակարգերից՝

- հարկերի ենթահամակարգ,
- պետության հարկային քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինների ենթահամակարգ,
- հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվային և իրավական ակտերի ենթահամակարգ:

Հարկային հարաբերությունների կարգավորման, նշված ենթահամակարգերի գործունեության, ինչպես նաև ամբողջ հարկային համակարգի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, օրենսդրական կայուն հիմքերի առկայություն: Այդ իսկ պատճառով, հարկային քաղաքականության իրավական ապահովման հարցերը մշտապես գտնվել են ինչպես կառավարողների, այնպես էլ՝ իրավաբան և տնտեսագետ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ հարաբերությունների կարգավորման օրենսդրաիրավական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումից բացի, հարկային լծակների ընտրության համար չափազանց կարևոր է նաև տվյալ երկրի տնտեսության առանձնահատկությունների ուսումնասիրությունը, հարկման արդյունավետության խնդիրների բացահայտումն, ինչպես նաև ընտրված լծակների գործադրման ճկունության ապահովման կառուցակարգերի մշակումը:

Հարկային համակարգի և հարկային քաղաքականության արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, և հատկապես տվյալ երկրի տնտեսության զարգացման մակարդակով: Այդ առումով, Հայաստանի Հանրապետությունը կենտրոնացված կառավարման մոդելից ազատական տնտեսական հարաբերություններին անցման պայմաններում հայտնվեց մի իրավիճակում, երբ ի հայտ եկան մի շարք նոր հանգամանքներ, որոնք հանրապետությանը կանգնեցրին որոշակի դժվարությունների առաջ: Դրանց հաղթահարումը մինչև օրս ստեղծում է տարբեր խնդիրներ ինչպես հանրապետության տնտեսության զարգացման, այնպես էլ դրա կարգավորման լծակների ձևավորման գործընթացներում: Այդ առումով, հատկապես պետք է կարևորել հարկային համակարգի ձևավորմանը և հարկային քաղաքականության իրականացմանն առնչվող խնդիրների լուծումը, քանի որ դրանց հիմնական նպատակն է պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռե-

սուրսների կենտրոնացումը և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական առանձնահատկություններից անհրաժեշտ է նշել ռեսուրսային թերապահովվածությունը, երկրի ներդրումային գրավչության ցածր մակարդակը, ֆինանսական սուղ հնարավորությունները, շուկայական արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը, հաղորդակցության ուղիների սահմանափակությունը, արտաքին տնտեսական համագործակցության ցածր մակարդակը, մասնավոր տրանսֆերտներից մեծ կախվածությունը, արտաքին պարտքի զգալի ծավալը, կառավարման կորպորատիվ մշակույթի բացակայությունը, ինչպես նաև տարածաշրջանային չլուծված հիմնախնդիրը և այլն: Այսպիսի վիճակը, բնականաբար, թողնում է իր բացասական ազդեցությունը նաև հարկային համակարգի ձևավորման և հարկային քաղաքականության իրականացման հետ կապված գործընթացների վրա:

Նշված հիմնախնդիրներով հանդերձ, ցանկացած երկրում, այդ թվում ԶՀ-ում վարվող հարկային քաղաքականության և ձևավորված հարկային համակարգի գնահատման հիմնական բնութագրիչը՝ հարկային մուտքերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշն է, որը հանրապետությունում դեռևս բավականին ցածր է: Այս հանգամանքն, անշուշտ, պահանջում է հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված համալիր քայլեր: Ընդ որում, դրանք պետք է լինեն փոխկապակցված և կրեն համակարգային բնույթ, քանի որ նույնիսկ արդյունավետ դրույքաչափերի կիրառման պարագայում հիմնականում հավասարակշռված և հիմնավորված վարչարարությամբ կարելի է հասնել հարկային համակարգի և հարկային քաղաքականության արդյունավետության:

Գործարար միջավայրի բարելավման առումով չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը: Այն, ըստ էության, կարող է ունենալ ինչպես խթանիչ, այնպես էլ արգելակող ազդեցություն գործարար միջավայրի զարգացման և տնտեսավարող սուբյեկտների ու պետության միջև գործընկերային հարաբերությունների հաստատման վրա: Այդ առումով, ներկայումս ԶՀ-ում հարկային քաղաքականությունն ուղղված է վարչարարության կատարելագործմանը և պետական եկամուտների կենտրոնացմանը: Այդ նպատակին հասնելու համար ԶՀ կառավարության կողմից մշակվել է համապատասխան ռազմավարություն, որով նախատեսվում է հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, հարկային մարմինների գործունեության վերակազմակերպում, հարկային հսկողության

Ժամանակակից կառուցակարգերի ներդրում և այլն²:

ՀՀ-ում հարկային վարչարարության կատարելագործման նպատակով հարկային իրավախախտումների բացահայտման և քննության ուղղությամբ պետք է ապահովել հարկային մարմինների լիազորությունների հիմնավորվածության բարձր աստիճան: Մասնավորապես, արդյունավետ վարչարարությունը պետք է ենթադրի.

հարկային իրավախախտումների համար համարժեք պատասխանատվության սահմանում,

հիմնավորված ստուգումների անցկացում,

գործուն լծակներով ստվերային տնտեսության ծավալների կրճատում,

հարկային և իրավասու այլ պետական մարմինների միջև կոորդինացված փոխգործակցության կազմակերպում և այլն:

Հարկային վարչարարության լիազորությունների ծավալի և դրանց շրջանակի սահմանման ժամանակ պետք է որպես ելակետ ընդունել այնպիսի մոտեցում, որպեսզի հարկային մարմինների լիազորությունները լինեն բավարար անհրաժեշտ հսկողությունն իրականացնելու համար, միաժամանակ, չհանգեցնելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության անհարկի միջամտության: Ընդ որում, տեխնիկական առաջընթացին զուգընթաց վարչարարության լծակներով պետությունը տնտեսավարող սուբյեկտների հետ փոխհարաբերություններում չպետք է խոչընդոտի տնտեսության զարգացման, այլ պետք է նպաստի գործարար ակտիվության և տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հարկ է, սակայն նշել, որ տնտեսության կարգավորման հարկային լծակների կիրառման առումով դեռևս կան բազմաթիվ խնդիրներ, որոնց չլուծված լինելու հանգամանքն էականորեն սահմանափակում է արդյունավետության հասնելու հնարավորությունները: Չնայած ՀՀ կառավարության կողմից իրականացված մի շարք բարեփոխումների, այդուհանդերձ, տնտեսական զարգացման առանձին խնդիրներ մնում են դեռևս չլուծված: Դրանցից առավել հատկանշականներն են.

հարկերի հավաքագրման ցածր մակարդակը,

ստվերային տնտեսության մեծ չափերը,

մաքսային սահմանի վրա առաջացող ԱԸՀ գերավճարները,

² Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին, 23.02.2012թ. N195-Ն որոշում:

- օրենսդրության հաճախակի փոփոխությունները,
- արտոնությունների տրամադրման խնդիրները և այլն:

Նշված խնդիրները հիմնականում արդյունք են ստվերային տնտեսության: Բնականաբար, որքան մեծ է հարկային բեռի ծանրությունը տնտեսությունում, այնքան մեծ կլինի նաև ստվերային տնտեսության շրջանակը: Մինևույն ժամանակ ստվերային տնտեսությունը մեծապես հետևանք է նաև հարկային անբավարար վարչարարության և պետական ծախսերի անարդյունավետ կառավարման, որոնք կարող են դառնալ ստվերային տնտեսության ընդլայնման գործոն: Դա բացառելու համար բարեփոխումները միաժամանակ պետք է ուղղված լինեն տնտեսական գործունեության թափանցիկության ապահովմանը և խախտումների համար պատասխանատվության խիստ միջոցների կիրառմանը: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ այստեղ գործում է նաև սովորույթի ուժը, համաձայն որի մարդիկ, ովքեր երկար տարիներ գործել են ստվերային դաշտում, դժվարությամբ կփոխեն իրենց գործելաոճը: Այդ առումով, կարևոր նշանակություն կունենա նաև հարկային մարմինների կողմից հարկային ռեգիստրի ստեղծումը, որն իրականացնելով անհրաժեշտ մոնիթորինգ, հասարակության համար պարբերաբար կիրապարակի համապատասխան տեղեկություններ հարկատուների գործունեության վերաբերյալ:

Ամփոփելով, պետք է նշել, որ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար բազմաթիվ խնդիրների հետ միասին անհրաժեշտ է, առաջին հերթին, լուծել հարկային հարաբերությունների կատարելագործման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները, որոնք, ըստ էության, կայանում են ՀՆԱ-ի նկատմամբ հարկային մուտքերի տեսակարար կշռի բարձրացման, ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության հաստատման, հարկային վարչարարության կատարելագործման և, որ ամենակարևորն է, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման մեջ:

Վարդան ԲՈՍՏԱՆԶՅԱՆ, Տիգրան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման
հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Բանալի բառեր. հարկային քաղաքականություն, հարկային համակարգ, հարկային վարչարարություն, հարկատեսակներ, ստվերային տնտեսություն, գործարար միջավայր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Հոդվածում բացահայտվել են հանրապետությունում սոցիալ-տնտեսական զարգացմանը խոչընդոտող գործոնները, հատկապես գնահատվել են ստվերային շրջանառության սահմանները: Առաջարկվել են դրանց չեղքացման և գործարար միջավայրի բարելավման ուղիներ:

Vardan BOSTANJYAN, Tigran HARUTYUNYAN
Increasing the efficiency of tax policy issues in the Republic of Armenia

Key words. tax policy, tax system, tax administration, taxes, shadow economy, business environment

The article is devoted to the study of the problems of the Republic of Armenia to increase the efficiency of tax policy and tax administration. The article revealed the factors that hinder socio-economic development, especially the boundaries of the shadow economy of the estimated turnover. Options are proposed to improve the business environment and to neutralize them.

Вардан БОСТАНДЖЯН, Тигран АРУТЮНЯН
Вопросы повышения эффективности налоговой политики в Республике Армения

Ключевые слова. налоговая политика, налоговая система, налоговое администрирование, налоги, теневая экономика, деловая среда

Статья посвящена изучению налоговых проблем Республики Армения с целью повышения эффективности налоговой политики и налогового администрирования. В статье выявлены факторы, которые препятствуют социально-экономическому развитию, особенно по части границ тени предполагаемого оборота. Представлены варианты для улучшения бизнес-среды и нейтрализовать их.